



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ի. Տ. Ե. Լ. Ի. Բ.

Թ. Ե. Մ. Ա. Կ. Ա. Ն. Տ. Ե. Ղ. Ե. Կ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Վ. Ի. Հ. Ա. Կ. Ի. Ս. Հ. Ա. Յ. Ո. Յ. Ն. Ա. Ի. Զ. Ե. Ի. Ա. Ն. Ի. Ե. Ի. Պ. Ե. Ս. Ա. Բ. Ա. Պ. Ի. Ո. Յ.

Ա. Տ. Ե. Ն. Ա. Կ. Ա. Ն. Կ. Ա. Բ. Ա. Գ. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ն. Բ.



Հոկտեմբերի 3. — Մեկիթոփուլ քաղաքի ժողովրդոց խնդրանացը համաձայն, Առաջնորդական Ատենիս օրագրական որոշմամբ հաստատուեցաւ տեղւոյն աղօթատան երեցփոխան Վարդերես աղայն Շարվարեանց:

Հոկտեմբերի 10. — Առաջնորդական Ատենան ընդունելով այլի Կատարինեայ, ամուսնոյ հանգուցեալ Յակոբ Աղայի Մանիկ օղլույ խնդիրը որ ի 26 սեպտեմբերի, առանց ժամանակ կորուստնեայ հարկաւոր տեղերու հետ գրագրուածին

բանալով գործ դրաւ զկարելին հոգացողութիւն այս բարեպաշտուհի կնոջ նուիրած՝ բայց ուրիշներու քով ի վաղուց կորսուածի պէս մնացած գումարը ձեռք բերելոյ յանուն եկեղեցւոյն սրբոց Հրեշտակապետաց, որպէս զի նորա տարեկան տոկոսեօքն՝ — ըստ խնդրոյ տիկնոջն — վարժեցնել տայ Խալիպեան Ազգային Ուսումնարանի մէջ ձրիավարժ աշակերտ մը Մանիկեան սան աւուսնով: Այս սանը պիտի բերուի Տաճկաստանի Ամասիա քաղաքէն, այսինքն կտակող տիկնոջն եւ իւր հանգուցեալ ամուսնոյն հայրենի քաղաքին աղքատ տղոցմէ մէկը:

Այրի Կատարինէ Յակոբեան բարեպաշտուհի տիկինը՝ ինչպէս յԱռաջնորդական Ատենէս ընդունեցաւ զարժանին շնորհակալութիւն եւ մեծ գոհութիւն, նոյնպէս կյուսամբ որ իւրաքանչիւր հայրենասէր անձը նորա այս աստուածահաճոյ գործը կարգալով եւ լսելով՝ պէտք է անշուշտ նորա ջանքը գովէ եւ պատմէ եւ այլոց՝ իխրատ եւ իյորդոր նմանողութեան :

Հոկտեմբերի 25. — Նախիջեւանի Հոգեւոր Կառավարութեան առաջարկութեանը համաձայն, Առաջնորդական Ատենիս կարգադրութեամբը նոյն քաղաքի սուրբ Գէորգայ եկեղեցւոյ միաբան Մովսէս քահանայն Զարիֆեանց տեղափոխեցաւ Թովթի անունով գիւղի սուրբ Աստուածածնայ եկեղեցին :

ՅՈՐԱԳՐՈՒԹԵՆՆԵՆ 1860 ԱՄԻ .

Յունուարի 4. — Առաջնորդական Ատենիս շրջաբերական հրամանագրաւ բաժանեցաւ իծեռն Հոգեւորական կառավարութեանց եւ վիճակիս եկեղեցիները վեհափառ Կաթողիկոսին եւ Աստուածընտիր Պատրիարքին ամենայն Հայոց Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ օրհնութիւնաբեր կոնդակը, որ վայելուչ հանդէսով կարգացուելէն ետքը՝ իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ բաժանեցաւ նաեւ բարեպաշտ ժողովրդոց նոյն սրբազան կոնդակին տպագիր օրինակները :

Յունուարի 4. — Համաձայն առաջադրութեան Տեառն Տեղակալի Առաջնորդութեան վիճակիս Դերապատիւ Դաբրիէլ Վարդապետի Այվազեան, եւ հրամանագրաւ Առաջնորդական Ատենիս նշանակեցաւ առժամանակեայ կատարող պաշտաման վանահօր սուրբ Խաչ վանուց Խրիմու՝ Կարապետ քահանայն Թաղէոսեանց :

Փետրուարի 1. — Համաձայն միջնորդութեան Հոգեւորական Կառավարութեանն Գրիգորուպոլսոյ եւ խնդրանաց Հասարակութեան քաղաքին՝ նշանակեցան երեցփոխան իսուրբ Պօղոս եկեղեցւոյ մեծարոյ Կարապետն Մկրտչեան Տրդատեանց եւ իսուրբ Աստուածածին եկեղեցւոյ Յովսափանն Ազարեանց :

Փետրուարի 4. — Ըստ բարեհաճութեան Գերապատիւ Տեղակալի Առաջնորդութեան վիճակիս, եւ ըստ խնդրանաց Հասարակութեան Թովթի գեղջ Նախիջեւանի, հրամանագրեցաւ յԱռաջնորդական Ատենէս Հոգեւորական Կառավարութեանն Նախիջեւանի, որ Թոյլ տրուի նոյն գիւղի Հասարակութեանը 1859 Թուին եղած եկամուտը ծախել տեղւոյն եկեղեցւոյ նորոգութեանը համար, եւ անկէջ ետքն ալ, այսինքն ապագայ տարիներն ալ հրաման խնդրեն յԱռաջնորդական Ատենէս նոյնպէս տարեկան եկամուտն իգործ դնելու համար մինչեւ այս աստուածահաճոյ շինութեանը կատարածը :

Փետրուարի 4. — Նախիջեւան քաղաքի եւ գիւղօրէից բարեպաշտ ժողովրդոց ընտրութեան համաձայն՝ հաստատուեցան երէցփոխանական պաշտօնի մէջ Առաջնակարգ վաճառականը մեծարոյ Գէորգ Աղայն Խաթրանեանց՝ սուրբ Լուսաւորիչ Աւագ եկեղեցւոյն, եւ Քերովբէ Աղայն Զորչովեանց՝ սուրբ Համբարձման եկեղեցւոյն քաղաքին . երրորդակարգ վաճառական Պօղոս Պետրոսեան Պարոնեանց՝ սուրբ Գէորգայ եկեղեցւոյն Փոքր Սալայի, Դանիէլ Աբէլեան՝ Զալթրի, եւ Մելքոն Այտինեան՝ Մեծ Սալայի, յորոց առաջին երեքն ընդունեցան Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնն ու գոհութիւնը իրենց ունեցած հաւատարիմ, ջերմեռանդ եւ արդիւնաւոր ծառայութեանցը համար, իսկ վերջնոցն աւանդեցաւ կարեւոր խրատ եւ քաջալերութիւն, որպէս զի ըստ օրինակի առաջնոցն չխնայեն Աստուծոյ տանը բարեգործութեան եւ պայծառութեան համար իւրեանց ջերմեռանդ եւ հարազատ ծառայութիւնը :

Փետրուարի 18. — Նախիջեւանի սուրբ Աստուածածին եկեղեցւոյ երէցփոխան՝ մեծարոյ Աստիճանաւոր Ստեփանոսն Նաթալով, սուրբ Նիկողայոս եկեղեցւոյ, երկրորդակարգ վաճառականը՝ Միքայէլ Տրապիզոնցեանց եւ սուրբ Գէորգայ եկեղեցւոյ՝ Մատթէոս երէցփոխանց երեք տարի պայմանեալ միջոցին ջերմեռանդութեամբ եւ արդիւնաւորութեամբ կատարելով իրենց յանձնուած աստուածահաճոյ ծառայութիւնը՝ ընդունեցան Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը, եւ

կրկին անգամ հաստատուեցան իրենց պաշտօնին մէջ համաձայն խնդրանաց Հասարակութեանն :

Փետրուարի 18. — Վեհափառ Կաթողիկոսի եւ Աստուածընտիր Հայրապետին Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ Հրամայական կոնդակին համաձայն, որ ի 15 Յուլիոսի ընդ համարաւս 31, Առաջնորդական Ատենիս Անդամ Գրիգոր Աբեղայն Աղափիրեանց արձակեցաւ իւր պաշտօնէն, եւ յուղարկեցաւ իսուրբ Էջմիածին :

Փետրուարի 22. — Կերչ քաղաքի Աղօթատան երէցփոխան մեծարոյ վաճառական Գաբրիէլ Աղայն Փէշէքէրեան՝ իւր փութաջան աշխատասիրութեանն ու ջերմեռանդ ծառայութեանը համար արժանացաւ ընդունել Առաջնորդական Ատենիս գրաւոր շնորհակալութիւնը :

Մարտի 14. — Համաձայն առաջարկութեան Խարասուպազարի սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Գաւթի Աւագ քահանայի նախկերտեան, եւ

միակամ հաւանութեան հասարակութեան քաղաքին՝ նշանակեցաւ երեցփոխան նոյն եկեղեցւոյ մեծարոյ Խաչուկն Քէչիեան :

Մարտի 17. — Ըստ զօրութեան Հրովարտակի Սրբագումար Սիւնիոդոսին Ս. Էջմիածնի եւ ըստ համաձայն առաջարկութեան Տեառն Փրօքուրորի նորին Մեծարոյ Յովհաննու Եսայեան Միրաքեանց, հրամանագրեցաւ բոլոր Հոգեւորական կառավարութեանց եւ քահանայից վիճակիս, որ այսուհետեւ թէ՛ իսուրբ Էջմիածին եւ թէ՛ յԱռաջնորդական Ատենիս խրկուելիք փողերը մեծարոյ երէցփոխանք կամ Հոգեւորական Կառավարութիւնք մասնաւոր անձանց ձեռքով չհասցընեն, այլ յատուկ ապահովական եղանակաւ. եւ եթէ մասնաւոր անձանց ձեռքով ղրկելու լինին՝ եւ կորսուի ձանապարհին կամ աւազակներու ձեռքը մատնուի, այն ժամանակը ղրկողները կպարտաւորին վճարել այն կորուստը առանց այլեւայլութեան :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք,

Խ Ի Ղ Ճ Մ Տ Ա Յ

Համայն ուրեք յոյզքն այն եւ խայթք զոր իխորս անդ խղճին զգամք՝ մեծարանս իմն են սրբութեան առաքինութեանն զոր առաթուր հարկանեմք :

Համայն ուրեք զմեղանացն զհետ երթան ձանձիր եւ արտմութիւն, որ եւ ազգ իմն առնեն մեղ եթէ իկարգի եւ յանմեղութեան եւեթ իցէ գառնել զմերս բարեբաստութիւն իվերայ երկրի :

Իզո՛ւր է մեղ առնուլ զանձամբ զկերպարանս աներկիւղ խրոխտանաց. մեղապարտ խիղճն մտաց՝ անձամբ անձին է մատնտու :

Տագնապք անագորոյնք՝ ամենայն ուրեք

յառաջոյ մեղ ընթանան. միայնութիւն՝ խըռովէ զմեղ, աղջամուղջն ահաբեկէ : Այնպէս իմն թուի մեղ եթէ յամենայն ուստեք ցընորք անկերպարանք իզուրս ոստուցեալք յերես հարկանիցեն մեղ զսրտին մեր զարհաւիրս : Երազք ահաւորք՝ կերպարանս սեաւս եւ խաւարինս բերեն մեղ առաջի : Եւ ոճիրն, զորոյ այնքան փափաքանօք զյեան ընթանամք, ոճիրն այն ինքնին ապա զմեր պնդի զյետ, գիշակեր իմն անգեղ բերելով զսիպ, եւ յարձակեալ պատառէ կեղեքէ զսիրտ մեր, եւ զվրէժս սլահանջէ զհեշտութեանն զոր եւ ինքնին էր մեղ մատուցեալ :

ՄԱՍԻՅԱՆՈՒ.

